2022թ.ձմեռային զորակոչի շրջանակում ՀՀ զինված ուժերի մարզական վաշտի՝ ըստ մարզաձևերի համալրման ենթակա հաստիքների թիվը և համալրման կարգը

Մարզական վաշտը համալրելու ցանկություն հայտնած ու սահմանված չափորոշիչներին համապատասխանող անձանց դիմումներն ընդունվում են մինչև 2022թ. դեկտեմբերի 17-ը bkma.mil.am կայքում կամ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության բնակության վայրի տարածքային ստորաբաժանումներում:

Դիմումների քննարկումը տեղի կունենա 2023թ. հունվարի 11-ին՝ հատուկ հանձնաժողովի նիստում:

Նշված զորակոչի համար նախատեսվել են համալրման ենթակա հետևյալ հաստիքները.

Հ/հ	Մարզաձևերի խումբը	Խմբում ընդգրկված մարզաձևեր	Խմբի համար նախատեսված համալրման ենթակա հաստիքների թիվը
1.	մենապայքարային օլիմպիական մարզաձևեր	ըմբշամարտ, ձյուդո, թաեքվոնդո, բռնցքամարտ, ծանրամարտ	9
2.	օլիմպիական ոչ մենապայքարային մարզաձևեր	հրաձգություն, նետաձգություն, սուսերամարտ, հեծանվային սպորտ, աթլետիկա, լող, ջրացատկ, մարմնամարզություն, թիավարություն, թենիս, սեղանի թենիս, դահուկային սպորտ	2
3.	ոչ օլիմպիական մարզաձևեր	սամբո, շախմատ	1
4.	խաղային մարզաձևեր	ֆուտբոլ	4